

Արդյունավետ ռիսկերի կառավարման և հսկողության պաշտպանական երեք գծերը

10 հուլիսի 2013

Արա Չալարյան, MBA, FCCA, CRMA

ՆԱԻ-Հայաստանի նախագահ

ՀՀ ԿԲ Գլխավոր վերստուգիչ

Բովանդակություն

- ❖ Ներքին աուդիտորների ինստիտուտ – Հայաստան
- ❖ Ներքին աուդիտ միջազգային մասնագիտական գործունեության շրջանակները
- ❖ Արդյունավետ ռիսկերի կառավարման և հսկողության պաշտպանական երեք գծերը

Ներքին աուդիտորների ինստիտուտ - Հայաստան

- ❑ ՆԱԻ-Հայաստանը ստեղծվել է 2013թ դեկտեմբերին:
- ❑ Հիմնադրման պահին ՆԱԻ-Հայաստանն ունեցել է 31 անդամ, ներկայումս՝ մոտ 50 անդամ:
- ❑ Ներքին աուդիտորների ինստիտուտ միջազգային կազմակերպությանն անդամակցում է ավելի քան 180 հազ. մասնագետ՝ աշխարհի 165 երկրներից, որից 105-ում կան ինստիտուտներ:

Ներքին աուդիտորների ինստիտուտ - Հայաստան

Անդամները

ՆԱԻ-Հայաստանի անդամները մասնավոր, պետական և ֆինանսական հատվածներում աշխատող ՆԱ-ի և այլ հարակից ոլորտների պրոֆեսիոնալ մասնագետներ են

Նպատակը

- Նպաստել ՆԱ-ի մասնագիտության զարգացմանը
- Նպաստել ներքին աուդիտորների համախմբմանը
- Համագործակցել շահագրգիռ կողմերի հետ

Առավելությունները

- Մասնակցել պարբերաբար կազմակերպվող Ինստիտուտի անդամների միջոցառումներին
- Օգտվել տեղեկատվության և գրականության լայն ռեսուրսներից
- Հանձնել մասնագիտական որակավորման քննություններ (CIA, CCSA, CGAP, CFSA, CRMA)

Ներքին աուդիտ միջազգային մասնագիտական գործունեության շրջանակները

Ներքին աուդիտի ինստիտուտի (www.theiia.org) կողմից հրապարակված «Միջազգային մասնագիտական գործունեության շրջանակները» ներառում են **պարտադիր** ուղեցույցները և **ցանկալի** ուղեցույցները: Պարտադիր ուղեցույցները ներառում են.

- Ներքին աուդիտի սահմանումը
- Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտները
- Վարքագծի կանոնները



Ներքին աուդիտ միջազգային մասնագիտական գործունեության շրջանակները

Ներքին աուդիտի սահմանումը

Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ **հավաստիացում** և **խորհրդատվություն** տրամադրող գործառույթ է, որը նախատեսված է արժեք ավելացնելու և կազմակերպության գործունեությունը բարելավելու նպատակով: Այն օգնում է կազմակերպությանը իրականացնել իր նպատակները համակարգված և կազմակերպված մոտեցմամբ գնահատելով և բարելավելով ռիսկերի կառավարման, հսկողության և կառավարման գործառույթների արդյունավետությունը:




Արդյունավետ ռիսկերի կառավարման և հսկողության պաշտպանական երեք գծերը

IIA Position Paper

THE THREE LINES OF DEFENSE IN EFFECTIVE RISK MANAGEMENT AND CONTROL

«Պաշտպանական երեք գիծ» մոդելը



I Գործառնական ղեկավարություն

□ Գործառնական ղեկավարները.

- Հանդիսանում են ռիսկերի սեփականատերեր ու կառավարիչներ
- Պատասխանատու են արդյունավետ ներքին հսկողության պահպանման և ռիսկերի ու հսկողական ընթացակարգերի իրականացման համար

Այնուամենայնիվ պետք է ներդրված լինեն կառավարման և վերահսկման հսկողություններ՝ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ոչ արդյունավետ հսկողության և անսպասելի իրադարձությունների բացահայտման համար:

II Ռիսկերի կառավարում և համապատասխանություն

- Պաշտպանական երկրորդ գծում ներառված բնորոշ գործառույթներն են.
 - **Ռիսկերի կառավարման** գործառույթ, որը վերահսկում և նպաստում է արդյունավետ ռիսկերի կառավարման գործունեության իրականացմանը:
 - **Համապատասխանելիության** գործառույթ, որը վերահսկում է տարբեր ներհատուկ ռիսկերը, ինչպիսիք են օրենքներին և կանոնակարգերին անհամապատասխանելիությունը:
 - **Վերահսկման գործառույթ**, որը վերահսկում է ֆինանսական ռիսկերը և ֆինանսական հաշվետվողականության խնդիրները:

Այնուամենայնիվ, պաշտպանական երկրորդ գիծը չի կարող կառավարման մարնիններին առաջարկել իրապես անկախ վերլուծություն ռիսկերի կառավարման և ներքին հսկողության վերաբերյալ:

III Ներքին աուդիտ

- Ներքին աուդիտը տրամադրում է ռիսկերի կառավարման, ներքին հսկողության և կառավարման գործառույթների արդյունավետության հավաստիացում, այդ թվում՝ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են պաշտպանական առաջին և երկրորդ գծերը հասնում ռիսկերի կառավարման և հսկողության նպատակներին:

Հավաստիացման շրջանակը ներառում է.

- Նպատակների լայն շրջանակ, այդ թվում՝ արդյունավետություն
- Ռիսկերի կառավարման և ներքին հսկողության բոլոր տարրերը
- Ընդհանուր կազմակերպությունը, ստորաբաժանումները, գործող միավորները և գործառույթները

Արտաքին աուդիտորներ, կարգավորող մարմիններ

- Արտաքին աուդիտորները, կարգավորող և այլ մարմինները կարող են հանդիսանալ պաշտպանական լրացուցիչ գծեր՝ կազմակերպության բաժնետերերին հավաստիացման ծառայություններ մատուցելու տեսանկյունից:
- Կարգավորող մարմինները
 - Սահմանում են պահանջներ կազմակերպությունում հսկողության ուժեղացման համար
 - Իրականացնում են անկախ և օբյեկտիվ գործառույթ՝ սահմանված պահանջների վերաբերյալ պաշտպանական առաջին, երկրորդ և երրորդ գծերին ամբողջությամբ կամ մասնակի հավաստիացում տրամադրելու համար:

Արդյունավետ ներքին աուդիտի իրականացում «Պաշտպանական երեք գիծ» մոդելի կիրառման շնորհիվ

Պաշտպանական երեք գծերի կիրառումն օգնում է.

- Խուսափել ռիսկերի վերաբերյալ առկա տվյալների կրկնօրինակումից և տարածումից
- Կանխել կարևոր ռիսկային դեպքերի բացթողումը
- Խուսափել թյուրիմացություններից
- Խուսափել հավաստիացման ծառայությունների մատուցման ծարնաբեռնվածությունից
- Տրամադրել հսկողական միջավայրի կարգապահություն և բազմաֆունկցիոնալ հեռանկար
- Ստեղծել ռիսկերի մեկ լեզու և հաշվետվողականության համակարգ
- Օպտիմալացնել հավաստիացման ծառայությունների մատուցման ընդհանուր ծախսերը

«Պաշտպանական երեք գծի» համակարգումը

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻԾ	ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻԾ	ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԳԻԾ
Ռիսկերի սեփականատերեր/ կառավարիչներ	Ռիսկերի կառավարում և համապատասխանություն	Ռիսկերի հավաստիացում
<ul style="list-style-type: none"> Գործառնական ղեկավարություն 	<ul style="list-style-type: none"> Սահմանափակ անկախություն Հաշվետվողականություն՝ ղեկավարությամբ 	<ul style="list-style-type: none"> Ներքին աուդիտ Ավելի մեծ անկախություն Հաշվետվողականություն՝ կառավարման մարմնին

- Ռիսկերի կառավարումը լավագույն կերպով իրականացվում է այն դեպքում, երբ առկա են երեք առանձին և հստակ սահմանված պաշտպանական գծերը:
- Բացառիկ դեպքերում պաշտպանական որոշ գծեր կարող են համատեղ իրականացվել:
- Կառավարման մարմինը և ղեկավարները պետք է ունենան հստակ սահմանված ակնկալիքներ կազմակերպության ռիսկերի և հսկողության կառավարման համար պատասխանատու յուրաքանչյուր խմբի ներսում տեղեկատվության տարածման և գործունեության համակարգման վերաբերյալ:

«Պաշտպանական երեք գիծ» մոդելը

Ֆուտբոլում մարզիչները հաճախ ասում են, որ դարպասապահը բաց կթողնի գնդակը՝ մնացած 10 խաղացողների կողմից գնդակի բաց թողնելուց հետո միայն:

ՆԱ-ի կողմից իրականացված պաշտպանական երրորդ գծի այս դերը նմանեցվում է ֆուտբոլային խաղի ժամանակ դարպասապահի ունեցած դերի հետ:

1-ին գիծ.
Գծային ղեկավարներ



2-րդ գիծ.
Ռիսկերի կառավարում/
Համապատասխանություն/
Այլ

3-րդ գիծ.
Ռիսկերի վրա հիմնված
ներքին աուդիտ

Շնորհակալություն ուշադրության համար

Ներքին Աուդիտորների Ինստիտուտ – Հայաստան
Ինստիտուտի քարտուղար – Ազատ Գաբրիելյան

հեռ. 37410 592580

էլ. փոստ info@iia.am

կայք www.iia.am